«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման մեթոդ

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ Խ. Աբովյանի անվան թիվ 84 հիմնական դպրոց

Երևան 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա- Ընթերցանությունը որպես ուսուցման մեթոդ

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Որո՞նք են ընթերցանության կազմակերպման ձևերը և մեթոդները և դրանք ինչպես են ազդում աշակերտների ունակությունների և կարողությունների վրա:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Ընթերցանությունը տեքստի և կարդացողի միջև բարդ փոխազդեցություն է, որը ձևավորվում է նախնական գիտելիքների, փորձի և կարդացողի լեզվային ընդհանրության վերաբերմունքի հիմքի վրա՝ պայմանավորված մշակույթով և սոցիալական վիճակով: Բացի այդ, ընթերցանությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում և քննադատական վերլուծություն: Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում: Ընթերցողները օգտագործում են ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ելնելով հարմարության նկատառումներից: Որոշ դեպքերում գրքերում օգտագործում են ծանոթագրություններ, որոնք բացատրում են անծանոթ բառերի իմաստները:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Ժամանակակից մեթոդիկայի գլխավոր ուղղություններից մեկը ընթերցանության ուսուցումն է որպես օտարալեզու (մասնավորապես՝ գերմաներենի) հաղորդակցական և միջմշակութային իրազեկության հիմնական բաղադրիչ: Ընթերցանության՝ որպես հաղորդակցական-ճանաչողական գործունեության դերը դժվար է գերագնահատել հասարակության զարգացման ժամանակակից փուլում: Չնայած մեդիակրթության սրընթաց զարգացմանը, ու նաև դրա շնորհիվ ընթերցանությունը շարունակում է մնալ տեղեկատվության ձեռքբերման հուսալի աղբյուր:

Խաչվող հասկացությունները՝

- Միտք և Ճանաչողություն
- Ժամանակ և մտածողություն:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Կրթական միջավայր
2. Գրականություն

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում առաջնային են դարձել արդի հասարակությունների զարգացման այնպիսի միտումները, ինչպիսիք են գլոբալացումը, միջազգայնացումը, տեխնոլոգիացումը, սոցիալական

շարժունության դերի մեծացումը, հանրային կյանքի բոլոր ոլորտների տեղեկատվայնացումը, բազմալեզվությունն ու բազմամշակութայնությունը: Հասարակությունների զարգացման համաշխարհային միտումներում, ինչպես նաև մեր երկրի հասարակական քաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններն իրենց արտացոլումն են գտնում նաև ժամանակակից կրթության, մասնավորապես՝ լեզվակրթության համակարգում: Ինչպես նշվում է «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»-ում, այսօր սկզբունքորեն փոխվել է լեզվակրթության նպատակը:

«Այն այլևս մեկ կամ երկու կամ նույնիսկ երեք լեզուների տիրապետելը չէ, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվում է առանձին՝ որպես իդեալ ունենալով լեզուն կրողի կատարյալ մակարդակը: Այս դեպքում նպատակն այնպիսի լեզվական «խաղացանկի» մշակումն է, որտեղ բոլոր լեզվական կարողություններն իրենց ուրույն տեղն ունեն»: Այսօր խիստ է դրված օտար լեզուների իմացության պահանջի խնդիրը: Այս խնդրի լուծման հետ կապված ծագում է նաև ուսուցանվող լեզուների դասավանդման որակը բարելավելու նպատակով օպտիմալ և համապատասխան մեթոդիկա մշակելու անհրաժեշտություն:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընթերցանության որպես ուսուցման գործիք՝ ըստ սովորողների տարիքային առանձնահատկությունների ու կրթական մակարդակի:

Հետազոտության խնդիրներն են

- Ուսումնասիրել ընթերցանության կազմակերպման գործընթացի էությունը,
- Ընթերցանության գործընթացի պլանավորումը՝ որպես ուսուցման արդյունավետության բարձրացման պայման

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական նյութից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք

Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու ավելի դժվար է դարձել երեխային ստիպել գիրք կարդալ, այնուհանդերձ, գրքի դերը անձի զարգացման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով ընթերցանության խթանման ձևերը նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները խաղի մեծ պահանջմունք ունեն: Խաղը երեխաների մտավոր ակտիվության դաստիարակման արժեքավոր միջոց է: Այն երեխաների մեջ կենդանի հետաքրքրություն է առաջացնում, զարգացնում է ճանաչողությունը՝ օգնելով յուրացնել ցանկացած նյութ: Ընթերցանությունը էլ ավելի հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է գտնել ընթերցանության այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը: Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Ընդհանրապես կրտսեր դպրոցականի համար խաղը ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև: Գործունեության այս ձևը հատկապես կարևորվում է տվյալ տարիքային խմբի համար:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համար առաջատար գործունեություն արդեն սկսում է դառնալ ուսումը: Բայց այդ դպրոցականը, որը դեռ երեկ տարված էր իր զվարթ խաղերով, չի կարող լիովին զերծ մնալ դրանից: Այդ իսկ պատճառով, երբ ուսուցումը համեմվում է խաղերով, դրանք երեխաների համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է մի նոր, յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ և, ինչու չէ, աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչև այդ գոյություն ունեին ինչ- ինչ պատնեշներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է նրա համար էլ աննկատելիորեն ընդգրկել ընթերցանության մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝տարվելով հետաքրքրաշարժությամբ և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը:

Ընթերցանության գործընթացում կիրառվող խաղերին ներկայացվում են որոշակի մանկավարժական պահանջներ: Դրանցից ելնելով՝ անհրաժեշտ է խաղն այնպես ընտրել, որ այն համապատասխանի ուսումնասիրվող թեմային, աշակերտների տրամադրություններին ու տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև օգնի՝ ճիշտ ըմբռնելու բովանդակությունը:

Ինչպես ցանկացած մանկավարժական հնար, ուսումնական տեխնոլոգիա, այնպես էլ հետաքրքրաշարժության տարրերով հարուստ խաղը կարող է նույնիսկ ձանձրացնել երեխաներին, եթե չփոփոխվի ու անընդհատ կրկնվի նույնությամբ: Այդ

իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Ցանկացած խաղ ցանկալի է տեսնել ոչ թե անխախտ կաղապարի, այլ աստիճանական զարգացման մեջ, որպեսզի երեխայի մեջ չկորչի հետաքրքրությունը, թե՛ դրա և թե՛ ուսուցման նկատմամբ[1]:

Փորձը ցույց է տվել, որ կրտսեր դպրոցականների միջավայրում խաղն առավել արդյունավետ է լինում, եթե մինչև կիրառումը քննարկվում է աշակերտների հետ: Երբ հաշվի են առնվում երեխաների առաջարկությունները, խաղը դառնում է ավելի հետաքրքիր: Աշակերտները մեծ հաճույքով են մասնակցում և հեշտությամբ ու առանց պարտադրանքի ներգրավվում են ընթերցանության մեջ: Առհասարակ խաղն ուսուցման գործընթացում օգնում է բազում նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիրակչական բազմապիսի խնդիրներ, ինչպիսիք են կարգապահություն, հաղորդակցում, իրար լսելու կարողություն, համագործակցություն և այլն:

Ներկայացնում ենք խաղերի մի շարք, որն ուղղված է ինքնուրույն ընթերցանությունը ավելի արդյունավետ անցկացնելու ու ցանկալի դարձնելու համար: Խաղը նախատեսված է 30 հոգանոց III դասարանի համար: Կազմում են 10-ական խմբեր (յուրաքանչյուր շարքում՝ 10 աշակերտ): Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ են նախապես՝ տեխնոլոգիայի ժամին, կտրատած կարմիր, կանաչ, դեղին տերևներ և պաստառ՝ որի վրա պատկերված է հսկա ծառի բուն՝ ճյուղերով:

Կարելի է ծառի վրա նկարել աչքեր, քիթ ու բերան: Բարի ժպիտը էլ ավելի կներշնչի երեխաներին, կոգևորի: Բարձրաձայն կարդալ համապատասխան թեմայով ընտրված տեքստը: Խմբերին կբաժանվի դեղին, կարմիր և կանաչ տերևները: Երեխաները նախապես տերևների ետևում կգրեն իրենց անունները: Գրադարանավարը կբացատրի առաջադրանքի էությունը: Խմբերից յուրաքանչյուրին կտրվի մի խոսքի մաս, ըստ խմբերի՝ դեղին-գոյական, կարմիր-ածական, կանաչ-բայ: Աշակերտները լուռ բնագրից կընտրեն խոսքի մասն ու կգրեն տերևի վրա: Ով շուտ վերջացնի, կմոտենա և կփակցնի իր տերևը ծառի ճյուղին: Արդյունքում՝ խմբերից յուրաքանչյուրը կստուգի մյուսի առաջադրանքի ճշտությունը (կարմիրը՝ դեղինի, դեղինը՝ կանաչի, կանաչը՝ կարմիրի): Քանի որ նախապես տերևների ետևում գրվել են աշակերտների անունները, հայտնի կդառնա, թե ով լավ չի յուրացրել խոսքի մասերը: Կհաղթի այն խումբը, ով անսխալ կկատարի առաջադրանքը, իսկ սխալ գրված խոսքի մասը «ծառից կպոկվի և արմատների մոտ կփակցվի» մինչև մյուս խաղը:

---

[1] Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, Էդիտ Պրինտ, 2012թ, էջ 50

Խաղի շնորհիվ լուծվում են թե՛ ուսումնական, թե՛ կազմակերպչական և թե՛ դաստիարակչական խնդիրներ: Այսօր թե՛ կրտսեր, թե՛ միջին և թե՛ ավագ դպրոցականները մեծ մասամբ դիտում են օտարերկյա արտադրության ֆիլմեր, մուլտֆիլմեր, խաղեր, զբաղվում համակարգչային տարատեսակ խաղերով: Նույնիսկ բակային խաղերն են փոխվել: Երբեմնի «Պահմտոցին» այսօր դարձել է «Ֆորտ Բոյարի բանալիները»: Ժողովրդական հեքիաթները, առակները, ասացվածքները, առածները միշտ էլ հոգեհարազատ են եղել բոլոր տարիքային խմբերին: Ինքնուրույն ընթերցանության դասաժամերին՝ II, III, IV դասարաններում, հեքիաթների կամ այլ գլխագրերի թեմատիկ խմբի ամփոփումն ու ամրապնումը կարելի է զուգակցել երեխաներին հոգեհարազատ խաղով:

Ընթերցանությունն օգնում է իրազեկ դառնալ գոյություն ունեցող խնդիրների մասին՝ ցույց տալով դրանց հաղթահարման ուղիները: Ընթերցանությունը ինքնավստահություն է ապահովում և օգնում է ազատվել սեփական անլիարժեքության ու սահմանափակ լինելու զգացումներից: Ընթերցանությունն ամրապնդում է համոզմունքներն ու հայացքները, մտածելակերպ ու աշխարհայացք է ձևավորում, անհատին պատրաստում է ընդունել նորը, ինչպես նաև կարծիքների փոխանակման ու քննարկումներին մասնակցելու արվեստ է սովորեցնում[2]:

Եվ ի վերջո, ընթերցանությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ գրականության գոհարների հետ: Որևէ հետաքրքիր բանի ընթերցումը մարդուն դուրս է բերում լարվածությունից և հանգստացնում է: Գիրքն ու դրա հանդեպ տածած հետաքրքրությունը ժառանգաբար չեն փոխանցվում: Դա գիտելիքներ ձեռք բերելու միջոց է, որի օգնությամբ ուսուցումը պատանի հասակում զգալիորեն հեշտանում է:

Ուստի՝ կարևոր է գրքի նկատմամբ ճիշտ վարմունք դաստիարակել, և գրքի նկատմամբ հետաքրքրությունը կառաջանա ինքնըստինքյան. մարդն ի վիճակի է վերացնել ընթերցանությանը խանգարող բոլոր խոչընդոտները: Համապատասխան միջավայրի ու պայմանների նախապատրաստման միջոցով մշակութային զարգացումը նպաստում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը: Դրա լավագույն օրինակներից է գրպանային գրքերի հրատարակման քաղաքականությունը, ինչի շնորհիվ գիրքը կարող է մշտապես «ներկա գտնվել և զարդարել անտեղի անցկացվող ժամանակը»:

Վաղ ընթերցողները սովորում են, թե ինչպես զարգացնեն սահունությունը՝ աշխատելով զույգերով, կարդալով միևնույն տեքստը մի քանի անգամ և արձանագրելով սահունության զարգացման իրենց փոփոխությունը:

[2] Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, Էդիտ Պրինտ, 2012թ, էջ 56

Սահունությունը սովորաբար քննարկվում է տարրական դպրոցի ուսուցիչների կողմից՝ իբրև բարձրաձայն կարդացած բառերի քանակ մեկ րոպեում: Չնայած ամբողջական սահմանումը ներառում է ընթերցման ճշգրտությունը, տոնը և առոգանությունը:

Աշակերտների ընթերցանության հաջողության չափումը չափազանց կարևոր է, քանի որ դասարանից դասարան փոխադրվելու զուգահեռ, աղքատիկ սահունությունը դառնում է ավելի մեծ խնդիր: Աշակերտները կարող են բարելավել իրենց ընթերցանության սահունության ունակությունը, բայց մենք բոլորս գիտենք, որ բոլոր աշակերտները չեն կենտրոնանան ընթերցանության վրա, եթե ուղղակի նրանց գիրք տանք և առաջարկենք կարդալ:

Աշխատանքային պրակտիկայի ընթացքում հայտնաբերեցինք, որ եթե կրկնվող ընթերցանությունը, զույգերով ընթերցանությունը և սահունության արձանագրման թերթիկները համադրվում ենք, աշակերտները ավելի մոտիվացված են աշխատելու իրենց ընթերցանության սահունության զարգացման ուղղությամբ: Դասարանում աշակերտների գրագիտության աճին աջակցելու և սահունության զարգացմանն աջակցելու համար կարող ենք կիրառել երկու հիմնական ռազմավարություններ՝ կրկնվող ընթերցանություն և սահունության արձանագրման թերթիկներ:

Տեքստի կրկնվող ընթերցանությունը աստիճանական աջակցություն է տալիս աշակերտին, որպեսզի ապակոդավորի և հիշի ծանոթ բառերը և միանման վանկերը՝ բարելավելով սահունությունը և ըմբռնումը: Սահունության արձանագրման թերթիկները տալիս են աշակերտներին պատասխանատվություն, մոտիվացնում է նրանց՝ տրամադրելով առաջընթացի մասին տվյալներ:

Կրկնվող ընթերցանության և սահունության արձանագրման թերթիկների կիրառման ինտեգրման համատեքստում, ես օգտագործում եմ մի էջանոց տեքստ: Աշակերտները կարդում են միևնույն տեքստը երեք անգամ՝ նշելով յուրաքանչյուր փորձ տարբեր գույնի մատիտներով: Կրկնվող ընթերցանության և սահունության արձանագրման թերթիկների կիրառմանը և ինտեգրմանը բավականին արդյունավետ կարելի է միացնել նաև զույգերով ընթերցանությունը: Ենթադրելի է, որ դասարանային միջավայրը կփոխվի դեպի լավը, կբարձրանա նաև աշակերտների ներգրավածությունը և պատրաստակամությունը սովորելու նկատմամբ:

Կրկնվող ընթերցանությունը հնարավորություն է տալիս տեքստը մի քանի անգամ կարդալ և վարժ ընթերցել, ինչն անհրաժեշտ է գրագիտության հմտության զարգացման համար: Զույգերով աշխատանքը ավելացնում է դրական սոցիալական միջավայրի բաղադրիչը, իսկ սահունության արձանագրման թերթիկները օգնում են աշակերտներին տեսնել իրենց առաջընթացը և շարունակել աշխատել՝ աշխատելով

ու շփվելով համադասարանցու հետ: Կրկնվող ընթերցանության քայլերը: Կրկնվող ընթերցանության քայլերը կարող են դառնալ ռեժիմ՝ կիրառվելով ընթերցանության դասավանդման ժամանակ յուրաքանչյուր օր:

Կրկնվող ընթերցանության մեջ ներառված քայլերը կարող են կատարվել թե՛ուսուցչի, թե՛ ուսուցչի օգնականի հետ՝ հետևյալ ձևաչափի կիրառմամբ:

1. Աշակերտները զույգեր են կազմում և ստանում իրենց ընթերցանության նյութերը, որոնք 100-ից 200 բառանոց տեքստեր են: Սրա հետ մեկտեղ աշակերտները ունենում են նաև տեքստի կրկնօրինակը, մարկեր և տվյալների արձանագրման ձևաթուղթ (տե՛ս հավելված 1-ը ստորև):

2. Առաջին աշակերտը ստանձնում է ընթերցողի դերը, իսկ մյուսը՝ հաշվողի: Հաշվողի դերում հանդես եկող աշակերտը կարող է նաև ժամանակ պահել՝ կախված արդյոք ուսուցիչն է հետևում ժամանակին, թե աշակերտը:

3. Ժամանակաչափի գործարկելուն պես ընթերցողը կարդում է, իսկ հաշվողի դեր ստանձնած աշակերտը նշում սխալ կամ բաց թողնված բառերը: Եթե ընթերցողը տատանվում է բառը արտասանել երեք անգամ, հաշվողը ինքն է կարդում բառը՝ առաջարկելով ընթերցողին կրկնել բառը և, ապա շարունակել կարդալը: Տեքստի կրկնօրինակի վրա սխալ կարդացված բառերի վերևում նշվում է X, իսկ բաց թողնված բառերը մարկերով գունանշվում են:

4.Ուսուցիչը ասում է, որ աշակերտները դադարեցնեն կարդալը 1 րոպե անց, որից հետո հաշվողը հետադարձ կապ է տալիս ընթերցողին և առաջարկում կրկնել բաց թողնված բառերը՝ ճիշտ արտասանությամբ:

5.Հաշվողը արձանագրում է կարդացած ճիշտ, սխալ և բաց թողնված բառերի քանակը՝ օգտագործելով տվյալների արձանագրման ձևաթուղթը:

6.Աշակերտը վերստին ներգրավվում է նույն տեքստի ընթերցանության մեջ և ստանում հետադարձ կապ: Աշակերտները կարող են կարդալ տեքստը մոտ 4 անգամ մի դասի ընթացքում:

7. Աշակերտները փոխում են դերերը և վերևում նշված 2-րդից մինչև 5-րդ քայլերը կրկնվում են:

8. Ուսուցիչը և աշակերտները ավարտում են կրկնվող ընթերցանությունը դրական նոտայով:

Հավելված 1: Տվյալների արձանագրման ձևաթուղթ

Ամիս /ամսաթիվ	Հաշվողի անուն	ընթերցողի անուն	Նպատակ	բառերի քանակ	տեքստ	Վերընթերցում	Ընթերցած բառերի քանակ	Սխալ ընթերցած բառեր	բացթողած բառեր	ճիշտ ընթերցած բառեր	Առաջընթաց

Սահունության արձանագրման թերթիկի կիրառության քայլերը [3]

● Ցանկալի է, որ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծենք արձանագրման պանակ, տեղադրենք և տպենք ընթերցանության տեքստերը, ընտրենք տեքստեր այնպես, որ աշակերտները չհիասթափվեն ընթերցանությունից, բայց միաժամանակ արձագրեն առաջընթաց ծրագրի պահանջներին համապատասխան: Հարկ կլինի ունենալ յուրաքանչյուր տեքստից երկու օրինակ, օրինակներից մեկը կօգտագործի ընթերցող աշակերտը, մյուսը՝ լսող/գնահատող աշակերտը:

● Զույգեր կազմենք: Զույգեր կազմելիս այնպեսպիտի անենք, որ նույն մակարդակի աշակերտները աշխատեն միասին: Հաշվի առեք նաև՝ որքանով են շփվող կամ իներտ աշակերտները: Եթե աշակերտը զգայուն է, ապա նա կարող է լավ աշխատել հանգիստ բնավորություն ունեցող աշակերտի հետ:

● Պարզաբանում ենք, թե սովորողներն ինչպես աշխատեն զույգերով և օգտագործեն սահունության արձանագրման թերթիկը: Բացատրելու համար հավաքում ենք դասարանը շրջանի մեջ, որպեսզի նրանք կարողանան տեսնել ուսուցչին և աշակերտներից մեկին, թե ինչպես եք ընթերցում սահմանված ժամանակում:

● Ժամանակ ենք պահում և առաջարկում աշակերտին կարդալ: Ժամանակի ավարտին կանգնեցնում ենք ժամացույցը, հաշվում բառերի քանակը և ասում աշակերտին:

● Թույլ ենք տալիս աշակերտին արձանագրել սահունության թերթիկում:

● Սկսեք փորձարկումը: Նշում ենք աշակերտ զույգերի անունները, վերհիշում վարքագծի նորմերը (ձայնի բարձրություն, որտեղ են նստում, ինչպես ստանալ օգնություն) և ուղղորդում ենք նրանց, որ ինքնուրույն կերպով կիրառեն սահունության արձանագրման թերթիկները:

● Քննարկում և շարունակում ենք փորձարկել: Երբ աշակերտները փորձարկեն զույգերով ընթերցանությունը և արձանագրեն թերթիկներում, համատեղ՝ բոլորդ միասին, վերլուծում ենք, թե արդյո՞ք որևէ մեկն ունեցել է դժվարություն:

[3] Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. 2009թ. ,էջ 6

● Աշակերտների աշխատելու ընթացում ուսուցիչը պտտվում է դասարանում՝ դիտարկելով՝ արդյոք աշխատում են, թե ոչ: Որոշ ժամանակ անց Ձեզանից ավելի քիչ ժամանակ կպահանջի:

● Ժամանակի ընթացքում աշակերտներին հնարավորություն ենք տալիս՝ իրենք սահմանեն իրենց նպատակները:

Դարձնում ենք այդ նպատակները կոնկրետ, սակայն թող դրանք չլինեն հանրային, նաև ներառում ենք ժամանակահատվածը, որում կհասնեն նպատակին: Օրինակ՝ ես կկարդամ 60 բառ րոպեում կամ 1 րոպե կարդալու ընթացքում ես թույլ կտամ ընդամենը 2 կամ ավելի քիչ սխալ: Այս նախապատրաստությունները ավարտելուց հետո կիրառոում ենք մեթոդը պարբերաբար՝ հատկացնելով դրանք 10 -ից 15 րոպե: Այն օգնում է աշակերտներին կրկնակի բարելավել ընթերցանության արագությունը:[4]

Ընթերցանության տեխնիկան գիտելիքի, ինչպես նաև հետագա ուսումնական կարողությունների հիմքն է, քանի որ բովանդակության լիարժեք ընկալում հնարավոր է տեխնիկապես վարժ ընթերցելու դեպքում միայն: Եթե երեխան վատ է կարդում, բնականաբար չի ցանկանում զբաղվել ընթերցանությամբ: Մյուս կողմից՝ քիչ կարդալու պարագայում չի կարող լավ կարդալ, քանի որ կարողությունը զարգացնելու հնարավորություններն են սահմանափակ:

Այս կարողությունը, սակայն, հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է «Ուղղորդվող ընթերցանության» մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով: Ընդհատված ընթերցանության մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն: Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի: Յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Կարևոր է նաև նախապես մտածել այն հարցերը, առաջադրանքները, որոնք պետք է տրվեն դադարների ժամանակ: Բոլոր ուսուցիչները միաձայն համաձայնվում

[4] . Խարազյան, Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Եր. Ասողիկ հրատ., 2003թ., էջ 56

են, որ ընթերցանությունը միշտ եղել է և կլինի ցանկացած ուսուցման հիմքը: Առանց ընթերցանության հմտությունների երեխայի համար դժվար կտրվեն բոլոր առարկաները: Այն երեխաները, որոնց փոքր հասակում կսովորեցնեն սիրել և գնահատել գրքերի արժեքը, ավելի լավ կհարմարվեն դպրոցական կյանքին: Լինում են դեպքեր, երբ երեխան կարողանում է կարդալ, սակայն դժկամությամբ է կարդում, անընդհատ կոնֆլիկտների մեջ ընկնելով ծնողների հետ: Բարեբախտաբար, գոյություն ունեն մեթոդներ, որոնք կօգնեն ծնողներին սեր սերմանել երեխայի մեջ ընթերցանության նկատմամբ:

Անչափ կարևոր է ընթերցանությանը նպաստող միջավայրը: Մի բան պարզ է, որ այսօր երեխաները քիչ են կարդում: Դա էլ իր բացատրությունն ունի: Տեխնիկապես հագեցած մեր դարում հեռուստացույցը, համակարգիչը և այլ ժամանակակից սարքեր փոխարինում են գրեթե ամեն ինչին: Այնուամենայնիվ, անկախ ժամանակից և պայմաններից, գրագետ և խելացի անհատի ձևավորման գործում գրքերը մնում են առաջին տեղում: Գրականությունն ունի ճանաչողական, հոգևոր-բարոյական մեծ արժեք, որը բնութագրում է նաև հոգևոր զարգացման չափանիշները: Այսինքն՝ գրականությունը հոգեկրթիչ դեր է կատարում մարդու կյանքում, նրա համար ինքնակատարելագործվելու, դժվարությունները հաղթահարելու համար ուղիներ բացում: Ճշմարտության, բարու, խղճի, գեղեցիկի, արդարության, ազատատենչության գաղափարներն արտացոլված են գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններում:

Հայ և համաշխարհային դասականների ստեղծագործությունների հերոսները հոգևոր բարձրագույն արժեքներ կրողներ են: Առանձնապես մեծ է դրական կերպարների ներգործությունը, որոնք սերունդներ են դաստիարակում իրենց խիզախության, անձնազոհության օրինակներով: Ուրեմն ինչպե՞ս երեխաների մեջ սեր արթնացնել ընթերցանության հանդեպ:

Հետաքրքիր և արդյունավետ ինքնուրույն ընթերցանությունը պետք է դուրս գա գրադարանի սենյակից: Ընթերցանություն պետք է կազմակերպել նաև բնության գրկում: Յուրաքանչյուր ընթերցանություն դարձնել տեսանելի, հուզիչ և առավել ընկալելի:

Բնությունը զարգացնում է սովորողների երևակայությունը, դիտողունակությունը: Սակայն դա ինքնաբերաբար չի կատարվում: Բնության գեղեցկությունը, նշանակությունը ընկալելու, հասկանալու համար անհրաժեշտ է նախապատրաստական որոշակի աշխատանք կատարել: Երեխային պետք է դաստիարակել այնպես, որ նա ընկալի բնության հմայքը, գեղեցկությունը, լինի գեղագիտական արժեքների կրողը: Երեխաների մտքի և զգացմունքների վրա

ներգործությունն ուժեղացնելու իմաստով էական նշանակություն ունեն ընթերցանությունից հետո անցկացվող զրույցները: Դրանք աշակերտներին հնարավորություն են տալիս կրկին անդրադառնալ գրքի բովանդակությանը: Միաժամանակ նպաստում են երեխայի խոսքի ակտիվացմանը և բառապաշարի հարստացմանը:

Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում: Ընթերցողները օգտագործում են ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ելնելով հարմարության նկատառումներից: Որոշ դեպքերում գրքերում օգտագործում են ծանոթագրություններ, որոնք բացատրում են անծանոթ բառերի իմաստները:

Ընթերցանությունն օգնում է իրազեկ դառնալ գոյություն ունեցող խնդիրների մասին՝ ցույց տալով դրանց հաղթահարման ուղիները: Ընթերցանությունը ինքնավստահություն է ապահովում և օգնում է ազատվել սեփական անլիարժեքության ու սահմանափակ լինելու զգացումներից: Ընթերցանությունն ամրապնդում է համոզմունքներն ու հայացքները, մտածելակերպ ու աշխարհայացք է ձևավորում, անհատին պատրաստում է ընդունել նորը, ինչպես նաև կարծիքների փոխանակման ու քննարկումներին մասնակցելու արվեստ է սովորեցնում:

Եվ ի վերջո, ընթերցանությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ գրականության գոհարների հետ: Որևէ հետաքրքիր բանի ընթերցումը մարդուն դուրս է բերում լարվածությունից և հանգստացնում է: Գիրքն ու դրա հանդեպ տածած հետաքրքրությունը ժառանգաբար չեն փոխանցվում: Դա գիտելիքներ ձեռք բերելու միջոց է, որի օգնությամբ ուսուցումը պատանի հասակում զգալիորեն հեշտանում է: Ուստի՝ կարևոր է գրքի նկատմամբ ճիշտ վարմունք դաստիարակել, և գրքի նկատմամբ հետաքրքրությունը կառաջանա 18 ինքնըստինքյան. մարդն ի վիճակի է վերացնել ընթերցանությանը խանգարող բոլոր խոչընդոտները:

Համապատասխան միջավայրի ու պայմանների նախապատրաստման միջոցով մշակութային զարգացումը նպաստում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը: Դրա լավագույն օրինակներից է գրպանային գրքերի հրատարակման քաղաքականությունը, ինչի շնորհիվ գիրքը կարող է մշտապես «ներկա գտնվել և զարդարել անտեղի անցկացվող ժամանակը»:

Ընթերցանության խրախուսիչ մեթոդներից մեկն էլ քննարկումներն են: Ժամանակ առ ժամանակ ընթերցասրահում կազմակերպվում են գրքերի քննարկումներ: Սովորողներն իրենց սիրելի գրքերի մասին նախապես պատրաստում են նյութեր, պատմում են, թե ինչեր են սովորել գրքերից: Նման

դեպքերում սովորոբար ծավալվում է ակտիվ քննարկում, սովորողները լրացնում են իրար, հարցեր տալիս, ստուգում միմյանց: Նման քննարկումները, որպես կանոն, անցնում են շատ ակտիվ ու շատ արդյունավետ են, որովհետև դրանցից հետո սովորողները, լսելով այս կամ այն գրքի մասին, ցանկանում են կարդալ:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված հետազոտական աշխատանքը՝ կարող ենք փաստել, որ ընթերցանությունը սովորեցնելու ռազմավարությունները հիմնականում կենտրոնացված են իմաստի վրա: Այսինքն՝ նպատակը տեքստի հասկանալը և հաճելի ընթերցանությունն է: Սա իրականացվում է համատեղ, ուղղորդված և անհատական ընթերցանության մեթոդներով: Առավել քիչ ուշադրություն է հատկացվում հնչյունաբանական իմացությանը և հնչյուններին, բայց սա ընթերցանությունը վայելելու համատեքստն է և շատ քիչ ժամանակ է զբաղեցնում:

Ընթերցանության սահունության, արտահայտչականության ու ըմբռնման զարգացմանն ուղղված այս ուսումնասիրությունը արդիական է և մշտապես գտնվում է հանրակրթության պատասխանատուների և ուսուցման ու ուսումնառության գործընթացը կազմակերպողների ուշադրության և հոգածության ներքո: Աշխատանքում ներկայացված մեթոդներն ու ռազմավարությունները փորձարկվել են մեր աշխատանքային պրակտիկայի ընթացքում, և նկատելի է անհատական առաջընթաց սովորողների մոտ: Առաջացել է հետաքրքրասիրություն՝ ուսումնառության գործընթացի նկատմամբ, ընդ որում՝ նաև ուսումնական այլ առարկաների ուսումնառության մեջ նկատելի է դարձել աշակերտների ակտիվ ներգրավումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, Էդիտ Պրինտ, 2012թ
2. Բոգին Գ.Ի. Տեքստի ըմբռնման տիպաբանություն. Դասագիրք. նպաստ. Կալինին, 1986 թ.
3. Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. 2009թ.
4. Ռ. Խարազյան, Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Եր. Ասողիկ հրատ., 2003թ.